

ԲԱՌԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ԸՍՏ ԷՊՈԿՈՐԴ ԱՂԱՅԱՆԻ

Բառը լեզվի այն հիմնական, կենտրոնական միավորն է, որի մասին հայտնվել են բազմաթիվ ու բազմատեսակ, նույնիսկ իրարամերժ կարծիքներ: Բառ հասկացության հետ կապված է հետևյալ երկվությունը. մի կողմից՝ այդ հասկացությունն ակներև է, ներըմբռնողորեն (ինտուիտիվ կերպով) պարզ ու զիտակցվող, այսինքն՝ լեզվի կրողն առանց որևէ դժվարության կարող է զանազանել առանձին բառերն իրարից: Մյուս կողմից՝ լեզվաբանների համար չափազանց դժվար է սահմանել բառ հասկացությունը: Նույնիսկ մեկ լեզվի սահմաններում դժվար է տալ բառի այնպիսի սահմանում, որ այն ամենը, ինչ ինտուիտիվ կերպով ընկալվում է որպես բառ, համապատասխանի այդ սահմանմանը, իսկ այն, ինչ լեզվի կրողը չի ընկալում որպես բառ, հակասի այդ սահմանմանը. հսկիչն ավելի է բարդանում, երբ պահանջվում է տալ բառի համընդհանուր, այսինքն՝ բոլոր լեզուների համար կիրառելի սահմանում: «Առաջին հայացքից չի կարող տարօրինակ չթվալ, որ լեզվաբանության մեջ դեռևս բառի համընդունելի սահմանում չկա: Գրեթե բոլորն էլ համաձայն են, որ բառը լեզվի հիմնական միավորն է, բայց այդ միավորի մի քանի հարյուր սահմանումներ են առաջադրված, և որոնց մեջ էլ չկա մեկը, որ բավարարի եթե ոչ բոլորին, ապա գոնե լեզվաբանների մեծ մասին»¹: Դժվարությունն ստեղծվում է այն պատճառով, որ նախ բառերն ունեն թե՛ տիպերի ու տեսակների, թե՛ իմաստաբանական ու կառուցվածքային և թե՛ քերականական հատկանիշների բազմազանություն, իսկ յուրաքանչյուր չեզվում դրանք այս կամ այն չափով տարբեր են, այնուհետև՝ բառի մեջ խաչաձևվում են լեզվաբանական ամենատարբեր ոլորտների՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության (չհաշված տրամաբանության, հոգեբանության, փիլիսոփայության, մեր ժամանակներում նաև ընդհանուր իմաստաբանության, ինֆորմացիայի տեսության և այլնի առարկա հանդիսացող բառը) առանձնահատկություններ: Իսկ դա նշանակում է, որ բառը կարող է սահմանվել տարբեր չափանիշներով: Ակնհայտ է, որ ուղղակի անհնար է այդ բոլոր հատկանիշները ներառել (որը շատ կարևոր է) մեկ ձևակերպման մեջ: Բացի այդ, լեզվում առկա են, այսպես կոչված, միջանկյալ, երկդիմի միավորներ, որոնց սահմանազատումն իրենց հարող ավելի բարձր կամ ցածր միավորներից նույնպես որոշ դժվարություններ է առաջացնում: Սա է պատճառը, որ լեզվաբանության մեջ մինչև այժմ չկա բառի սպառիչ և բոլորի կողմից անվերապահորեն ընդունելի սահմանում: Շատ լեզվաբաններ նույնիսկ հրաժարվում են բառ հասկացությունից ընդհանրապես՝ նախընտրելով այլ պայմանական և ավելի նեղ իմաստ ունեցող տերմինների կիրառությունը, ինչպես, օրինակ, ձևույթ, բառույթ, բառաձև, բառ, իմաստային տարբերակ և այլն: Լ. Վ. Շերբան գրում է. «Իսկապես, ի՞նչ է «բառը»: Ինձ թվում է, որ տարբեր լեզուներում այն կլինի տարբեր: Դրա-

¹ Д. Н. Шмелев, Современный русский язык, Лексика, М., 1977, с. 49:

նից, ըստ էության, հետևում է, որ բառ հասկացությունն ընդհանրապես գոյություն չունի»²։ Բայց և այնպես պետք չէ ծայրահեղությունների մեջ ընկնել բառի համակողմանի ու ճշգրիտ սահմանում տալու դժվարությունը դեմս հիմք չէ լեզվի այդքան կարևոր հասկացությունից հիմնովին հրաժարվելու համար, հատկապես երբ հաշվի ենք առնում այն, որ բառերով արտահայտվում են, ինչպես է. Սեպիրն է նշում, հոգեբանորեն ընկալելի իրականությունը, արտաքին աշխարհը և այլն։

Բառի էությունը բացահայտելու և դրա սահմանումը տալու ուղղությամբ զգալի ներդրում ունեն ռուս լեզվաբանները (Ս. Պոտեբնյա, Վ. Վ. Վինոգրադով, Ա. Ի. Սմիռնիցկի, Օ. Ս. Ախմանովա, Կ. Ա. Լևկովսկայա, և. Մ. Շանսկի, Դ. Ն. Շմելյով և ուրիշներ)։

Այս հարցը դուրս չի մնացել նաև հայ լեզվաբանների տեսադաշտից։ Դայ լեզվաբանության մեջ ընդհանրապես բառը նախնառաջ սահմանվել է որպես ձևի և իմաստի ամբողջություն ունեցող միավոր։ Ըստ Մ. Արեղյանի՝ «Բառն է նշանակություն ունեցող մեկ հնչյունը կամ մի բանի հնչյունների կապակցությունը»³։

Յր. Աճառյանը գրում է. «Բառը, ուրեմն, ծայրերի այն գումարն է, որ օժտված է որոշ նշանակությամբ։ Ըստ այսմ, բառը ունի երկու կողմ, առաջին՝ ծայր կամ հնչյուն (բառի ձևը), որ բառի արտաքին կողմն է, և երկրորդ՝ իմաստ կամ նշանակություն, որ բառի ներքին արժեքը կամ նրա էությունն է։ Կարող է լինել նշանակություն առանց բառի, բայց չկա բառ առանց նշանակության»⁴։

Հետագայում բառի համար առանձնացվել են նաև այլ կարևոր հատկանիշներ։

Գ. Ղափանցյանը բառ է համարում նախադասության մեջ ինքնուրույն, շարժուն, ձևավորված և իմաստային տեսակետից անբաժան ու շեշտ կրելու հատկանիշներով օժտված միավորը⁵։

Գ. Սևակը բառի հիմնական հատկանիշներից մեկը համարում է նրա կոնկրետացած, մասնավորված իմաստը և ապա ավելացնում. «Բառի հատկանշական կողմերից մեկն էլ այն է, որ նա ավարտված, վերջավորված, ինքնամիփոփ միավոր է թե՛ ըստ բովանդակության, թե՛ ըստ ձևի, և այդ պատճառով ունի ինքնուրույն գործածություն, կապվում, հարաբերվում է իր նման այլ բառերի։ Սրան ավելանում է նաև այն, որ բառը, որքան էլ երկար ու բազմածույթ լինի, ունենում է մեկ բառական շեշտ»⁶։

Բառի սահմանման գործում, սակայն, ավելի մեծ վաստակ ունի էդ. Աղայանը, և նրա տեսակետների վերլուծությանն էլ անդրադառնում ենք ստորև։

Լեզվաբանական գրականության մեջ բազմիցս առաջարկվել է առանձնացնել բառի հատկանիշները, այնուհետև սահմանման մեջ ընդգրկել նրանք, որոնք առաջնային են ու ավելի կարևոր։ Էդ. Աղայանը առաջնորդվում է այս

² Л. В. Щерба, Языковая система и речевая деятельность, Л., 1974, с. 108.

³ Ս. Արեղյան, Դայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 5։

⁴ Յր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների (իմաստաբանություն, բառաբանություն, շարահյուսություն), Եր., 2005, էջ 63։

⁵ Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Եր., 1939, էջ 175։

⁶ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 208։

սկզբունքով և բառի բնութագրման ու սահմանման համար առանձնացնում հետևյալ հատկանիշները.

1. Բառը նյութականորեն ձևավորված իմաստակիր միավոր է:
2. Բառն օժտված է այնպիսի իմաստով, որը կոնկրետացած է առարկայ-նության-որակայնության հատկանիշով:
3. Բառը հասկացության նյութական անվանում կամ նյութականացված հասկացություն է:
4. Բառն ինքնակա, խոսքից դուրս և նրանից անկախ գոյություն ունեցող միավոր է:
5. Բառն ունի շարահյուսական միավորի դերով հանդես գալու կարողություն:
6. Բառն արտասանական շղթայի առանձին, ինքնուրույն հատված է: Այդ առանձնացումը տարբեր լեզուներում տարբեր միջոցներով է իրականացվում, որոնք կոչվում են բառի սահմանագատիչ հատկանիշներ: Հայերենում այդ հատկանիշը շեշտն է, որը, դրվելով բառի վերջին վանկի վրա, ազդանշում է նրա ավարտը¹:
7. Բառն ունի քերականական ձևավորվածություն²:

Կասկած չկա, որ այս հատկանիշներից յուրաքանչյուրն արտացոլում է բառի էությունը, բայց բառը սահմանելիս հնարավոր չէ առաջնորդվել դրանցից միայն մեկով կամ երկուսով: Այս հատկանիշները պետք է ընդունել որոշ վերապահությամբ, դրանցից ոչ մեկը բացարձակ, առավել ևս ընդհանրական չէ, ավելին, կարող է արժանանալ առարկության: Լեզվի համակարգը միատարր չէ, և հստակ սահմանագատվող միավորների կողքին գոյություն ունեն, այսպես կոչված, միջանկյալ օղակներ, ինչպես՝ բառի և ձևույթի, բառի և բառակապակցության նկատմամբ միջին դիրք ունեցող միավորները: Բացի այդ, նշված հատկանիշները չեն տարածվում բառային մակարդակի բոլոր միավորների վրա:

Ինչպես բոլոր լեզվաբանները, այնպես էլ եղ. Աղայանը բառի կարևոր հատկանիշ է համարում նախ նրա ձևաիմաստային ամբողջականությունը. «Յուրաքանչյուր բառ, — նշում է նա, — ունի իր հնչույթային կազմը (իր նյութական ձևը) և իր բառային իմաստը (իր բովանդակությունը): Իբրև այդպիսին նա ձևի ու բովանդակության միասնություն կազմող միավոր է»³: Բայց լեզվի ամեն միավոր, որ ունի ձև և իմաստ, բառ չէ, կան նաև բառից փոքր կամ մեծ այլ իմաստակիր միավորներ: Ճիշտ է, բառն ունի և՛ հնչյունական ձևավորվածություն, և՛ իմաստ, որոնցով և այն տարբերվում է լեզվի ոչ իմաստակիր միավորից՝ հնչյունից (հնչույթից), բայց լեզվի համակարգում կան նաև ձևաիմաստակիր այլ միավորներ՝ ձևույթներ, էլ չենք խոսում այն մասին, որ բառից ավելի բարձր մակարդակի միավորները նույնպես ունեն ձև ու բովանդակություն: Ուստի բառը սահմանելիս միայն այս հատկանիշները նշելով (ինչպես տեսանք վերևում), լեզվաբանները առաջին հերթին բախվում են հենց այս բառի և ձևույթի հստակ սահմանագատման խնդրին: Այնպես որ, այդ երկու հատկանիշները թեև կարևոր ու առաջնային են, սակայն շատ քիչ են բա-

¹ Տես եղ. Աղայան, Ընդհանուր և հայկական քառագիտություն, Եր., 1984, էջ 8–12:

² Եղ. Աղայան, նշվ. աշխ., էջ 6: Նույնի Լեզվաբանության իմունքներ, Եր., 1987, էջ 305:

ոհի, եթե ոչ լիակատար, ապա գոնե հնարավորինս ամբողջական բնութագրության համար:

Ըստ երկրորդ կետի՝ բառերն արտահայտում են առարկայնության—որակայնության հատկանիշով կոնկրետացած իմաստներ, այսինքն բառերն անվանում են կոնկրետ առարկաներ, երևույթներ կամ դրանց որակական հատկանիշներ: Գասկանալի է, որ խոսքը բառի անվանողականության մասին է: Բայց ինչպես հեղինակն է նշում, այս բնութագրությունից դուրս են մնում սպասարկու բառերը շաղկապները, կապեր, ինչպես նաև ծայնարկությունները: Գեղինակը սրանց մեջ չի ընդգրկում հատուկ անունները, դերանուններն ու վերաբերականները. չէ՞ որ դրանք նույնպես զուրկ են նշված հատկանիշներից: Հատուկ անունները, ծիշտ է, ունեն իմաստ, բայց այդ իմաստը զուրկ է էդ. Աղայանի նշած առարկայնության և որակայնության հատկանիշից, դրանք սոսկ անուններ են, ոչ թե հասկացության անվանում (օր. **Արևիկ**—ը չի նշանակում, որ անվանակիրը փոքր արև է, **Ջնրուխտ**—ը որ անուն կրողը գմրուխտ է և այլն): Դերանուններն ունեն ընդհանուր, վերացարկված իմաստներ, չեն անվանում առարկաները կամ հենց իրականության երևույթները, այլ նշում են դրանք խոսողի հետ ունեցած հարաբերության միջոցով, իսկ վերաբերականներն արտահայտում են սոսկ զգացմունքներ, այլ ոչ թե հասկացություններ:

Ըստ երրորդ հատկանիշի՝ տրամաբանական մոտեցմամբ բառը հասկացության նյութականացված անվանումն է: Էդ. Աղայանը, նկատի ունենալով այն, որ «բառային իմաստն իր մեջ ներառում է հասկացությունը՝ որպես բառի բովանդակության հիմք, կորիզ կամ միջուկ»⁹, այս և նախորդ հատկանիշները համարում է գրեթե նույնը, ուստի այն, ինչ ասացինք նախորդ հատկանիշի մասին, վերաբերում է նաև սրան:

Գաջորդ հատկանիշը բառի ինքնակա գոյությունն է լեզվի համակարգում: Լեզվաբանը նշում է, որ այս հատկանիշով բառերը տարբերվում են երկրորդական ձևությունից (օրինակ՝ ածանցները —**ակ**, —**իկ**, —**ություն** և այլն), որոնցից յուրաքանչյուրը որոշակի կոնկրետացում է տալիս բառիմաստին, «բայց,—ասում է էդ. Աղայանը,— ոչ մեկն էլ խոսքի մեջ չի կարող հանդես գալ իբրև ինքնուրույն միավոր, այսինքն չի կարող գործածվել անկախ կերպով առանց բառ դառնալու»¹⁰: Այլ կերպ ասած՝ այս հատկանիշը ենթադրում է բառի վերարտադրելիություն: Ամեն ազամ բառեր գործածելիս մենք դրանք չենք ստեղծում, այլ վերցնում ենք արդեն պատրաստի գոյություն ունեցող ձևերը: Սրանով բառը տարբերվում է բառակապակցությունից և նախադասությունից, որոնք կառուցվում են խոսելու պահին: Բայց լեզվում կան այլ վերարտադրելի միավորներ ևս, ինչպես օրինակ, կայուն բառակապակցությունները, առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, որոնք երբեմն արտահայտվում են նաև նախադասություններով:

Հինգերորդ հատկանիշի համաձայն՝ բառն ունի շարահյուսական գործառույթ: Լեզվաբանության մեջ բառը շարահյուսական միավոր է դիտվում այնքանով, որքանով այն հանդես է գալիս որպես նախադասություն կամ նախա-

⁹ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 9:

¹⁰ Նույն տեղում, էջ 10:

դասության անդամ: Էդ. Սդայանը իրավացիորեն հրաժարվում է այդ կարծիքից: «Այս դեպքում էլ, սակայն,— գրում է Էդ. Սդայանը,— բնութագրությունից դուրս են մնում դարձյալ կապերը, շաղկապները, ծայնարկություններն ու բացականչությունները, հարաբերականները (եղանակավորող բառերը), քանի որ նախադասության քերականական—շարահյուսական վերլուծության մեջ դրանք նախադասության անդամներ չեն դիտվում»¹¹: Սիա սա հաշվի առնելով՝ անվանի լեզվաբանը բառը համարում է շարահյուսական միավոր ըստ այն բանի, որ բառը, անկախ նրանից նախադասության անդամ է, թե ոչ, խոսքում գործածվում է որպես ազատ միավոր. «Քերականական տեսակետից նախադասության մեջ բառը կարող է որպես նախադասության անդամ հանդես գալ կամ ոչ, սակայն դա չի փոխում նրա բառային բնույթը և գործառական բնութագիրը: Կարևորն այն է, որ ամեն մի բառ ազատորեն կարող է գործածվել խոսքի մեջ որպես ինքնուրույն միավոր՝ առանց մի այլ բառի կցորդ դառնալու, ինչպես կապերն են: Այն բոլոր բառերը, որոնք խոսքի մեջ գործածվում են իբրև ինքնուրույն միավորներ, բայց նախադասության անդամներ չեն, ինչպես կոչական բառերը, միջարկությունները, շաղկապները և այլն, **շարահյուսական միավորներ են**»¹²: Մինևույն է, այս դեպքում էլ հատկանիշը չի տարածվում կապերի վրա:

Վեցերորդ հատկանիշի համաձայն՝ բառը շեշտի շնորհիվ ձեռք է բերում արտասանական միասնություն և դառնում արտասանական շղթայի առանձին տարր: Այս հատկանիշը նույնպես բացարձակ չէ: Օրինակ հենց շեշտակրության առկայությունը թույլ չի տալիս, որ շատ սպասարկու բառեր համարվեն բառ, ինչպես շաղկապների, կապերի և դերանունների զգալի մասը, որոնք շեշտ չեն ստանում, բայցնայնպես, արտասանական շղթայի առանձին տարր են:

Եվ վերջապես, կան լեզուներ, որոնցում բառի կարևոր հատկանիշ է նրա քերականական ձևավորվածությունը, այսինքն բառը խոսքից դուրս էլ ունի քերականական ցուցիչներ (օրինակ ռուսերենում), սակայն այն հայերենին բնորոշ չէ: Հայոց լեզվում, ճիշտ է, բառերն առանց քերականական վերջավորությունների արտահայտում են որոշ քերականական իմաստներ, ինչպես՝ խոսքամասային պատկանելություն, հոլովական հարացույցի ելակետային ձև, ըստ այդմ էլ՝ այդ ձևի քերականական հատկանիշները: Այնուամենայնիվ, դա մեր լեզվում բառի էական հատկանիշ չէ:

Այսպիսով Էդ. Սդայանը բառի սահմանման համար կարևոր է համարում վերոնշյալ կառուցվածքային—արտասանական, իմաստային, քերականական առանձնահատկությունները՝ մեծ մասը միասին վերցրած: Այս չափանիշներով առաջնորդվելով՝ Էդ. Սդայանը բառը սահմանում է հետևյալ կերպ. «**Բառ է այն հնչույթը կամ հնչյունախումբը, որն ունի բառային իմաստ, անկախ, ինքնուրույն գոյություն ու գործածություն՝ շարահյուսական միավորի դերով, և բառային շեշտ**»¹³:

Իհարկե, այս սահմանումը բացարձակ չէ: Լեզվի յուրաքանչյուր միավոր նախնառաջ սահմանվում է ըստ իր կատարած գլխավոր գործառույթի: Բառի

¹¹ Նույն տեղում, էջ 10:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, էջ 12:

գործառույթը երևան է գալիս հնչույթ, բառ, նախադասություն շարքում, որտեղ հնչույթն ունի իմաստատարբերակիչ, բառն անվանողական, իսկ նախադասությունը հաղորդակցական գործառույթ։ Եղ. Աղայանը բառի անվանողականության վերաբերյալ թեև խոսում է՝ ասելով (տես 2-րդ և 3-րդ կետերը), որ բառը հասկացության նյութական անվանումն է, և այն նույնացնում բառիմաստի առարկայության—որակայության հատկանիշի հետ, սահմանման մեջ, այնուամենայնիվ, այդ հատկանիշներից և ոչ մեկը չի ընդգրկում։ Ստացվում է, որ բառի հիմնական հատկանիշներից մեկին տրվում է երկրորդական տեղ։

Բացի այդ, սահմանման մեջ ներառված բոլոր հատկանիշները, նույնիսկ ամբողջության մեջ, չեն տարածվում բառային մակարդակի բոլոր միավորների վրա։ «Այս սահմանումը, սակայն, — նշում է Եղ. Աղայանը, — ընդգրկում է այնպիսի բառերը, ինչպիսիք են **ծառ, քար, ուտել, գնալ, կանաչ, գեղեցիկ** և այլն։ Մինչդեռ լեզվի մեջ կան նաև բառեր, որոնք թեև ինքնուրույն բառային ձև ունեն, բայց գուրկ են ինչպես բառային իմաստից, այնպես էլ անկախ, ինքնուրույն գործածությունից, օրինակ **դեպի, մասին, և, ու, բայց և այլն**»¹⁴։ Այլ կերպ ասած՝ սահմանումը չի վերաբերում կապերին և շաղկապներին։ Այս համգամանքը նկատի առնելով՝ լեզվաբանության մեջ առանձնացվում են լիիմաստ բառեր և թերիմաստ բառեր։ Լիիմաստ են այն բառերը, որոնք ունեն ինքնուրույն բառային իմաստ և բառային ձև, թերիմաստ են բառային ձև ունեցող, բայց բառային իմաստից գուրկ բառերը։ Առաջինները արտահայտում են բառային իմաստ, երկրորդները՝ քերականական։ Այսպիսով՝ թերիմաստ բառերն միջանկյալ դիրք են զբաղեցնում բառերի և երկրորդական ձևույթների միջև ծնով նմանվելով բառերին, իմաստով՝ երկրորդական ձևույթներին։ Լեզվաբաններից ոմանք դրանք բառեր են համարում, ոմանք ոչ։ Եղ. Աղայանը ընդունում է, որ դրանք բառեր են. «Երբ մենք ցանկանում ենք բնութագրել և սահմանել դրանք, օր.՝ շաղկապներն ու կապերը՝ որպես բառ կամ հանել բառերի շարքից և հատկացնել երկրորդական ձևույթների կարգին, պետք է հենվենք ոչ թե առանձին դեպքերի, այլ դրանց ամբողջական համակարգի վրա։ Այս դեպքում, իհարկե, հարկադրված կլինենք ընդունել, որ կապերն ու շաղկապները իսկապես բառային ինքնուրույնություն ունեն, իսկ մի զգալի մասը՝ նաև բառային շեշտ։ Նշանակում է՝ ձևական հատկանիշներով դրանք հավասարվում են բառերին, թեև արտահայտում են քերականական իմաստներ»¹⁵։ Այս ամենը հաշվի առնելով՝ Եղ. Աղայանը դրանք անվանում է **ձևական բառեր**։

Այսպիսով պարզ է, որ ինչ սահմանում էլ տրվի բառին, միևնույն է, այն թերի կլինի։ Դա կապված է բառի յուրահատկության հետ։ Մնում է միայն տալ բառի այնպիսի սահմանում, որը կվերաբերի բառերի գոնե ճնշող մեծամասնությանը։ Եղ. Աղայանի տված սահմանումը բավարարում է այդ չափանիշին։

¹⁴ Նույն տեղում։

¹⁵ Նույն տեղում, էջ 14–15։

ОПРЕДЕЛЕНИЕ СЛОВА ПО ЭД. АГАЯНУ

В лингвистике теория слова и его дефиниция являются стержневыми. Многие лингвисты пытались дать определение слову, но до сих пор не сошлись в едином мнении. В армянском языкознании о слове и его теории наиболее подробно писал академик Эд. Агаян. В статье исследуются предложенные Эд. Агаяном важнейшие признаки описания слова и определение, сделанное на их основе. Это определение не совершенно, но, т.к. распространяется на подавляющее большинство слов, является лучшим из данных по сей день определений.

I. Movsesyan

THE DEFINITION OF THE WORD BY ED. AGHAYAN

In linguistics the theory and definition of the word occupies a pivotal place. Many attempts have been made by different linguists to define the word, but so far unanimous conclusion has been achieved. In Armenian linguistics the details of the theory of the word have been thoroughly discussed by academician Edward Aghayan. The present paper deals with the analysis of various properties of the word discussed and defined by Ed. Aghayan.

The research shows that although the definition of the word put forward by Ed. Aghayan can never be viewed as perfect for all possible lexical units, it is adequate for the majority of words. Thus, the theory of the word elaborated by academician Ed. Aghayan is considered to be the most appropriate one.